ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 37-Ա

ՄԵՐՈՒԺԱՆ ՌՈՒԶՎԵԼՏԻ ԽԵՉՈՅՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ԵՎ ՋՐԱՎԱԶԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով և 5-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006 թվականի No 731-Ն և No: 912-Ն որոշումների պահանջերով, 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով <<ԱԿԱ- ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը և Մերուժան Ռուզվելտի Խեչոյանի / 03.10.2019թ.մտից թիվ 240/ դիմումը՝
որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0016-0059 ծածկագրի բնակավայրերի նպատակային նշանակության 0.11075հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում Մերուժան Ռուզվելտի Խեչոյանի կողմից 2001 թվականին ինքնակամ կառուցած 19,27 քմ արտաքին մակերեսով այգետնակի և 4,0 քմ արտաքին մակերեսով ջրավազանի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:

2.Վերը նշված ինքնակամ կառուցված այգետնակը և ջրավազանը ճանաչել օրինական՝ համաձայն սույն որոշմանը կից, օրինական ճանաչված կառույցների և դրանով զբաղեցված ու պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

3.Նշված այգետնակին և զբաղեցրած հողամասին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան,1-ին փողոց, 1-ին նրբանցք,թիվ 34>> հասցեն:

4.Կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինա կան նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Աշխատանքային 15-օրյա ժամկետում դիմել ՀՀ ԱԳԿԿ աշխատակազմի համապատասխան մարզային ստորաբաժանմանը օրինականացված այգետնակի և պարսպի նկատմամբ Թումանյան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6.Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունն իրականացրած քաղաքացի Մերուժան Ռուզվելտի Խեչոյանին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով վաճառքի գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը պետության կամ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ ընդամենը 26000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ **ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ**

2021թ. ապրիլ ի 21
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 29-րդ հոդվածի 2-րդ մասով,Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին կետով՝
որոշում եմ.

1.Ս/թ ապրիլի 22-ից Նորիկ Մկրտումյանին վերանշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ բնակավայրի վարչական ղեկավար,հիմք՝22.04.2021թ.N 5 աշխատանքային պայմանագիր:
2.Թումանյան համայնքի Թարինջ բնակավայրի վարչական ղեկավար Նորիկ Մկրտումյանին հետ կնքել լիակատար անհատական նյութական պատասխանատվության պայմանագիր,հիմք՝ 22.04.2021թ. N 6պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021 թ. ապրիլի 22
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 39-Ա

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՏՈՒՆԿԻ ՕՐԸ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ, ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2021թ. ապրիլի 19-ի N 01/105.4.1/03246-2021 գրությունը՝
որոշում եմ.

1.<<10 միլիոն ծառ>> նախաձեռնության շրջանակում 2021թ.ապրիլի 25-ը (քաղաքացու օրվան նվիրված) համապետական ծառատունկի օրը Թումանյան համայնքում կազմակերպել 1000 հատ տնկանյութի (վայրի պտղատու և անտառային կուլտուրաներ) ծառատնկման աշխատանքներ:

2.Հանձնարարել համայնքի կազմի մեջ գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին և բոլոր հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝անկախ սեփականության ձևից.

1/Բնակավայրերի հասարակական վայրերում,հիմնարկ- ձեռնարկներում և ավտոճանապարհների հարակից տարածքներում կատարել ծառատունկ,ինչպես նաև պահպանել կանաչ տարածքները:

3.Այդ աշխատանքներին ներգրավել նաև համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, դպրոցի աշակերտներին, մանկավարժներին և համայնքի բնակչությանը:
4.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի օգնական 'Վահե Մելքումյանի և վարչական ղեկավարների՝վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 22
ք.Թումանյան